ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

27.04.2022թ. | ժամը 10:30-12:00 | ՀՀ վարչապետի աշխատակազմի խորհրդակցությունների մեծ դահլիճ

Մասնակիցներ՝

Բազմաշահառու խմբի անդամներ՝

Նախագահող՝	Համբարձում Մաթևոսյան	ՀՀ փոխվարչապետ
	Հովհաննես Հարությունյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
	Գայանե Գաբրիելյան	Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ
	Սիրվարդ Գևորգյան	Արդարադատության նախարարության գլխավոր քարտուղար
	Արման Պողոսյան	Ֆինանսների նախարարի տեղակալ (այլընտրանքային անդամ)
	Արթուր Մանուկյան	Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
	Օլեգ Դուլգարյան	«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի նախագահ, (մարզային ներկայացուցիչ)
	Նազելի Վարդանյան	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ-ի տնօրեն
	Վիկտորյա Բուռնազյան	«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի փոխնախագահ, (այլընտրանքային անդամ)
	Արտյոմ Պետրոսյան	«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի իրավաբանական տնօրեն
	Մանվել Եղիազարյան	«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահ
	Արամ Օսիկյան	«ԱՍՍԱԹ-Մ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն (այլընտրանքային անդամ)

ՀՀ ՎԱ ԱՃԹՆ-ի քարտուղարություն՝

Լուսինե Թովմասյան	քարտուղարության ղեկավար

Հասմիկ Մանուկյան	քարտուղարության փորձագետ

Հյուրեր՝

Նվեր Պետրոսյան	փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի խորհրդական
Լուսինե Մարտիրոսյան	փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի մամուլի քարտուղար
Փառանձեմ Դարբինյան	փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի ռեֆերենտ
Օրի Ալավերդյան	Ֆինանսների նախարարության աշխատակազմի եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ

ԲՇԽ-ի բացակա անդամներ՝

Վաչե Տերտերյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Արթուր Նիկողոսյան	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ադմինիստրատիվ տնօրեն
Վահե Վարդանյան	«Գեոմայնինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն (այլընտրանքային անդամ)
Գագիկ Շահնազարյան	«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ (այլընտրանքային անդամ)
Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն
Սուրեն Ներսեսյան	Երևանի պետական համալսարանի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ
Արթուր Համբարձումյան	«Հասարակական ձայն» հասարակական կազմակերպության խորհրդի անդամ (այլընտրանքային անդամ)

Արձանագրող՝ Հասմիկ Մանուկյան

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի (ԲՇԽ-ի) նիստի բացում

Փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանը, որպես ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահ, ողջունեց նիստի մասնակիցներին և անդրադարձավ այն փաստին, որ 2020թ. հունիսից ի վեր ԲՇԽ-ն առաջին անգամ է նիստն անց կացնում իրական ռեժիմով և նորացված կազմով, այդ թվում, նոր նախագահությամբ: Հ.Մաթևոսյանը շնորհակալություն հայտնեց ԲՇԽ-ի նախկին անդամներին և բեղմնավոր ու արդյունավետ գործունեություն մաղթեց ԲՇԽ-ի նոր կազմին: Փոխվարչապետը գոհունակությամբ փաստեց, որ, թեև COVID համավարակի պատճառով ընդհատվել էին ԲՇԽ-ի նիստերը և քննարկումները իրական ռեժիմում անցկացնելու հնարավորությունները, դա չի խանգարել բազմաշահառու խմբի անդամներին ու ԱՃԹՆ-ի Հայաստանի քարտուղարությանն իրականացնել Նախաձեռնության աշխատանքային ծրագրով նախատեսված կարևոր միջոցառումները, այդ թվում ԱՃԹՆ-ի հերթական՝ 2019 թվականի տարեկան ազգային զեկույցի պատրաստումը, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերի ներդրումը, Համաշխարհային բանկի հետ նոր դրամաշնորհային համաձայնագրի կնքումը և այլն: Այս ամենը թույլ է տալիս արձանագրել, որ ԱՃԹՆ-ի ներդրումը Հայաստանում այլևս կայացած փաստ է: Նախագահողը նիստի մասնակիցներին հիշեցրեց, որ հաջորդ տարի Հայաստանի Հանրապետությունը պետք է անցնի ԱՃԹՆ-ի երկրորդ միջազգային վավերացումը՝ միջազգային խորհրդի կողմից հաստատված նոր մոդելով, որը ենթադրում է վավերացման աշխատանքներում բազմաշահառու խմբի ավելի մեծ մասնակցություն: Հ.Մաթևոսյանն ընդգծեց, որ այս տարի կսկսվեն նախավավերացման աշխատանքները և վստահություն հայտնեց, որ դրանք հաջողությամբ կիրականացվեն: Այնուհետև, Հ. Մաթևոսյանն առաջարկեց անցնել օրակարգային հարցերի քննարկմանը:

Օրակարգային հարցերը

2. ՀՀ ԱՃԹՆ-ի 2022 թվականի վերանայված աշխատանքային ծրագրի հաստատում (չքննարկվող)

Բազմաշահառու խումբն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) **հաստատեց** ՀՀ ԱՃԹՆ-ի 2022 թվականի վերանայված աշխատանքային ծրագիրը:

3. ՀՀ ԱՃԹՆ-ի 2020-2021թթ. ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի կազմման տեխնիկական առաջադրանքի ներկայացում և հաստատում ԲՇԽ-ի կողմից

3.1. Զեկույցի շրջանակի հաստատման վերաբերյալ ԱՃԹՆ-ի ստանդարտով պահանջվող մի շարք որոշումների կայացում

ԱՃԹՆ-ի քարտուղարության ներկայացուցիչը տեղեկացրեց, որ Համաշխարհային բանկի կողմից Վարչապետի աշխատակազմին տրամադրված Հայաստանի ԱՃԹՆ-ի աջակցության դրամաշնորհի հետաձգված փաստացի մեկնարկի հետևանքով հետաձգվել են նաև ԱՃԹՆ-ի տարեկան զեկույցի կազմման աշխատանքները: Սակայն, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ համաձայնեցմամբ, 2022թ. ԱՃԹՆ-ի ազգային զեկույցը կներկայացնի Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտը երկու հաշվետու տարիների՝ 2020-2021թթ. համար: Զեկույցը նախատեսվում է հրապարակել 2022թ. նոյեմբեր ամսին: Լիազոր մարմինի ներկայացուցչին **առաջարկվեց** ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի համապատասխան միջոցառման իրականացման ժամկետի փոփոխության առաջարկություն ներկայացնել:

Նշվեց, որ մինչև 2021 հաշվետու տարվա հրապարակային հաշվետվությունների ներկայացումը **պետք է ճշգրտել** ազդակիր համայնքների ցանկը, քանի որ համայնքերի խոշորացման գործընթացի հետևանքով դրանում կարող են փոփոխություններ կատարված լինել:

Տեղեկացվեց, որ կապված 2021թ. ուժի մեջ մտած Հարկային օրենսգրքի փոփոխությունների հետ, անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666-Ն որոշման մեջ: **Որոշվեց** կատարվելիք փոփոխությունները քննարկել լիազոր մարմինների՝ Ֆինանսների նախարարության, Էկոնոմիկայի նախարարության, ՏԿԵՆ-ի ու ՊԵԿ-ի պատասխանատուների հետ և պաշտոնապես շրջանառել նախագիծը: Լիազոր մարմինների ներկայացուցիչներին և քարտուղարությանը **հանձնարարվեց** առաջիկա շաբաթվա ընթացքում կազմակերպել հանդիպում բոլոր պատասխանատու մարմինների ներկայացուցիչների հետ՝ քննարկելու 2021 հաշվետու տարում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված որոշակի հանքատեսակներ և խտահանքեր արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ տրամադրելու համար պետական տուրքի ապաագրեգացված տվյալների ներկայացման եղանակը, մասնավորապես, տվյալները ներկայացնող լիազոր մարմնի, ներկայացման ընթացակարգի և ձևաչափի վերաբերյալ լուծումները և դրանք ներկայացնել փոխվարչապետի գրասենյակ և ԲՇԽ-ին:

Կառավարության խմբակցության ներկայացուցիչն **առաջարկեց** առաջիկա տարիներին դիտարկել ներկայացվող եկամտային հոսքերից փոխադրամիջոցների գույքահարկը հանելու հարցը այն հիմնավորմամբ, որ փոխադրամիջոցներն օգտագործվում են ընկերությունների նաև այլ ոլորտներում վարած գործունեության շրջանակում: Մի շարք այլ եկամտային հոսքերի պես՝ այս եկամտային հոսքի դեպքում էլ հնարավոր չէ հաշվառումը վարել ծրագրի մակարդակով, ուստի ճիշտ չէ տվյալ եկամտային հոսքը վերագրել միայն հանքարդյունաբերական գործունեության ոլորտին:

Ներկայացվեց, որ հիմք ընդունելով այն փաստը, որ 2021թ. սեպտեմբերից Հայաստանի Հանրապետությունը մասնաբաժին ունի «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ում, Անկախ ադմինիստրատորը կուսումնասիրի և զեկույցում կներկայացնի ոլորտում պետական մասնակցության վերաբերյալ ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների կիրառելիության մասին առաջարկներ, որոնք, համաձայն ԲՇԽ-ի հետագա որոշումների, կտարածվեն հաջորդ տարիների Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցների և տվյալների բացահայտման շրջանակի վրա:

Նշվեց, որ 2020թ. հրապարակային հաշվետությունները արդեն ներկայացված են, իսկ 2021թ. հրապարակային հաշվետությունները՝ ինչպես նախորդ տարիներին, առցանց համակարգի միջոցով ներկայացվելու են օրենսդրությամբ սահմանված ժամկետում՝ մինչև 2022թ. օգոստոսի 1-ը: 2021թ. համար հաշվետու ընդերօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների ցանկը լիազոր մարմնի հետ կճշտվի մինչև այդ ժամկետը:

ԲՇԽ-ն **ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) ընդունեց** 2020-2021թթ. ազգային զեկույցի շրջանակին վերաբերող ԲՇԽ-ի որոշումները: ԲՇԽ-ի որոշումները ներկայացված են հավելված 1-ում:

Կառավարության խմբակցության ներկայացուցիչն **առաջարկեց, որ** 2022 և հետագա հաշվետու տարիների համար, որպես արդյունահանող ճյուղերից ստացվող ֆինանսական հոսք դիտարկվի նաև տնտեսական գործունեության հետևանքով մթնոլորտային օդին, ջրային և հողային ռեսուրսներին, բուսական և կենդանական աշխարհին հասցված վնասների փոխհատուցման գումարները: Ներկայումս ներկայացվում են տույժերի գումարները, իսկ վնասի փոխատուցման գումարները չեն ներկայացվում: **Որոշվեց** հարցը քննարկել հաջորդ տարիների հաշվետությունների ձևաչափերը հաստատելու ժամանակ:

3.2. Տեխնիկական առաջադրանքի ներկայացում

Ներկայացվեց, որ Անկախ ադմինիստրատորի (խորհրդատուի) կողմից Հայաստանի Հանրապետության 2020-2021թթ. ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման

տեխնիկական առաջադրանքը ներկայացվել է ԲՇԽ-ի անդամներին և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը և ստացված նկատառումները հաշվի են առնվել առաջադրանքում:

ԲՇԽ-ն **ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) ընդունեց** Անկախ ադմինիստրատորի (խորհրդատուի) կողմից Հայաստանի Հանրապետության 2020-2021թթ. ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման տեխնիկական առաջադրանքը:

Տեղեկացվեց, որ Համաշխարհային բանկի հաստատումից հետո կհրապարակվի մրցույթի հայտարարությունը:

3.3. ԲՇԽ-ի խմբակցությունների ներկայացուցիչներից կազմված գնահատող հանձնաժողովի անդամների թեկնածությունների ներկայացում

Առաջարկվեց Հայաստանի 2020-2021թթ. ԱՃԹՆ-ի զեկույցի կազմող Անկախ ադմինիստրատորի (խորհրդատուի) ընտրության գնահատող հանձնաժողովի կազմում ներառել ԲՇԽ-ի խմբակցություններից մեկական անդամ՝ համապատասխան խմբակցության առաջարկությամբ, և մեկ անդամ ազգային քարտուղարությունից: Հանձնաժողովը կնախագահի կառավարության խմբակցության անդամը: Ներկայացվեց, որ մինչև նիստը հանձնաժողովի անդամի թեկնածություն ներկայացրել է միայն ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը: Հանքարդյունահանող ընկերություններին խմբակցությանն առաջարկվեց, իսկ կառավարության խմբակցությանը **հանձնարարվեց** 3-օրյա ժամկետում ներկայացնել համապատասխան խմբակցության թեկնածուին:

4. Ընկերությունների իրավական սեփականատերերի բացահայտումը և Opening Extractives միջազգային ծրագրի ընթացքը

Կառավարության խմբակցության ներկայացուցիչը ներկայացրեց, որ համաձայն գործող օրենսդրության՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրանցում է բացառապես ՍՊ ընկերությունների մասով, իսկ բաժնետիրական ընկերությունների մասով տեղեկությունները հավաքագրում, գրանցում և պահպանում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան, որին պետական ռեգիստրի գործակալությունը որևէ հասանելիություն չունի: Իրավիճակը փոխելու համար անհրաժեշտ կլինեն մի շարք օրենսդրական փոփոխություններ կատարել, մասնավորապես «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում, «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքում,

որոնց վերաբերյալ անհրաժեշտ կլինեն համապատասխան քննարկումներ անցկացնել շահագրգիռ գերատեսչությունների հետ, քանի որ ՀՀ ԿԲ-ն որոշակի առարկություններ ունի դեպոզիտարիայի տեղեկությունները տրամադրելու վերաբերյալ: Խնդրի լուծման հնարավոր այլընտրանք առաջարկվեց նաև ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում համապատասխան պահանջի սահմանումը, ըստ որի ընդերքօգտագործման թույլտվություն ունեցող կամ դրա համար դիմող բոլոր ընկերությունները, այդ թվում՝ բաժնետիրականները, իրենց իրավական սեփականատերերի մասին տեղեկությունները պարտավոր կլինեն հրապարակել ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական azdarar.am կայքում՝ նախատեսելով նաև համապատասխան փոփոխությունները պարբերաբար թարմացնելու ժամկետներ: Նման փոփոխություն իրականացնելու համար էլ հարկ կլինի դա քննարկել այլ շահագրգիռ մարմինների, մասնավորապես՝ էկոնոմիկայի նախարարության, ֆինանսների նախարարության, ՏԿԵ նախարարության, Կենտրոնական բանկի և Կենտրոնական դեպոզիտարիայի հետ:

Ի պատասխան հրապարակային հրապարակումների ճանապարհով հարցի լուծման առաջարկի՝ այլ մասնակիցների կողմից ընդգծվեց, որ նախ, օրենսդրությամբ արդեն ամրագրված է փոփոխություններն իրականացնելու ժամկետը՝ 40 օր, ապա՝ նախընտրելի է հարցը լուծել միասնական ռեգիստր ունենալու միջոցով, քանի որ այդ դեպքում հեշտանում է գործընթացի վերահսկումը՝ ներկայացվող տվյալների ճշտության ստուգումը, դրանք ներկայացնելու ժամկետների նկատմամբ հսկողությունը, բացահայտված խախտումների դեպքում պահանջվող պատժամիջոցների կիրառումը, ինչպես նաև հնարավոր է լինում խուսափել պետական ռեսուրսների կրկնակի ծախսից և ընկերությունների նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների բեռ սահմանելուց: Բացի դրանից, նշվեց, որ Կենտրոնական բանկի առարկության փաստարկն այն մասին, թե ընկերությունների իրավական մասնակիցների մասին տեղեկությունների հասանելիությունը կարող է բացասաբար անդրադառնալ հնարավոր ներդրումների վրա, այնքան էլ հիմնավորված չէ, եթե հաշվի առնվեն մի շարք հանգամանքներ: Մասնավորապես, ռեգիստրում հրապարակված իրական շահառուների հայտարարագրերում արդեն տեսանելի են ընկերությունների սեփականության շղթայի մեջ մասնակցող միջանկյալ իրավական մասնակիցները, և երկրորդ, ներդրումների ներկա միջազգային ընդունելի նորմն այն է, որ իրական շահառուների/մասնակիցների թափանցիկությունը նպաստում է ներդրումների ավելացմանը, այսինքն՝ ինչքան «բարեվարք» է ընկերությունը, այնքան մեծ են նրա ներդրումներ գրավելու հնարավորությունները:

ԲՇԽ-ի նախագահը **հանձնարարեց** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և Արդարադատության նախարարությանը՝

շարունակել իրավական սեփականատերերի տվյալների հասանելիության կարգավորման հարցի քննարկումները շահագրգիռ գործընկեր պետական կառույցների հետ՝ հասցնելով դրանք մինչև դետալների մակարդակի, որից հետո ներկայացնել առաջարկվող լուծումը: Այնուհետև կորոշվի այն շրջանառելու հարցը:

Նիստի մասնակիցներին ներկայացվեց ԱՃԹՆ-ի և Open Ownership կազմակերպության կողմից համատեղ իրականացվող Opening Extractives ծրագրի առաջիկա միջոցառումների մասին: Ծրագիրը, որի նպատակներից է մասնակից երկրին տեխնիկական աջակցություն ցուցաբերել իրական շահառուների տվյալների ավտոմատ ստուգման մեխանիզմների մշակման գործում: Տեղեկացվեց, որ մայիս ամսին պլանավորում է փորձագետների մեկ-շաբաթյա այց Հայաստան, որի ընթացքում նախատեսվում են հանդիպումներ լիազոր մարմինների պատասխանատուների հետ՝ պարզելու և քննարկելու այն հնարավորությունները, որոնք թույլ կտան ավտոմատ կերպով կամ փոխգործելիությամբ պարզել իրական շահառուների հայտարարագրերում ներկայացվող տվյալների ճշտությունը: Միջազգային գործընկերների հետ համագործակցության արդունավետությունն ապահովելու նպատակով կարևոր է բոլոր շահագրգիռ մարմինների ներգրավվածությունը գործընթացին և մասնավորպես տեխնիկական փորձագետների այցի ժամանակ: Պահանջվող հմտությունների ուսուցման համար հնարավոր է նաև համապատասխան մարմինների աշխատակիցների, ինչպես նաև ԲՇԽ-ի անդամների համար աշխատաժողով անցկացնել: Ուստի, **առաջարկվեց** պետական մարմիններին նախապես՝ մինչև մայիսի 2-ը ներկայացնել աշխատաժողովի օրակարգի համար այն թեմաները, որոնցով հետաքրքրված են այդ մարմինները:

5. ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների համակարգի ստեղծման աշխատանքների մեկնարկի մասին

Ներկայացվեց, որ մեկնարկում են Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման շրջանակում հանքարդյունաբերության ոլորտում հրապարակային տվյալների համակարգված բացահայտման էլեկտրոնային համակարգի ստեղծման աշխատանքները: Համակարգը ստեղծվելու է Համաշխարհային բանկի կողմից ՀՀ վարչապետի աշխատակազմին տրամադրված «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին. լրացուցիչ ֆինասավորում» դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ և աշխատանքները ընթանալու են մինչև 2024թ. 1-ին եռամսյակը՝ դրամաշնորհային ծրագրի ժամկետի ավարտը: ԱՃԹՆ-ի մի շարք առաջատար երկրներ ամենամյա ազգային զեկույցների հրապարակումից անցում են կատարում տվյալների համակարգված բացահայտման ռեժիմին, որը ենթադրում է տվյալները տիրապետող մարմինների էլեկտրոնային համակարգերով առավել թարմ

տեղեկատվության ինքնաշխատ հրապարակման համակարգի ներդրում: Սա թույլ է տալիս ԱՃԹՆ-ի զեկույցներն ուղղորդել ավելի շատ ոլորտի բովանդակային խնդիրները ուսումնասիրելուն և բարձրացնել ԱՃԹՆ-ի օգտակարությունը: **Առաջարկվում է** ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը կհամակարգի աշխատանքների իրականացումը: Խումբն առաջարկվում է կազմել լիազոր պետական մարմինների տվյալներ տիրապետող պատասխանատուների, ինչպես նաև պետական տեղեկատվական համակարգերի թվայնացման համար պատասխանատու մարմնի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Այս ուղղությամբ առաջին առաջադրանքը տվյալների համակարգված բացահայտումների ՏՏ համակարգի տեխնիկական առաջադրանքի կազմումն է, որից հետո կսկսվեն ՏՏ համակարգի ստեղծման աշխատանքները:

Նիստը նախագահողը կարևորեց տարբեր ծրագրերի շրջանակում պետական մարմինների ՏՏ համակարգերի թվայնացման աշխատանքներում նույնատիպ աշխատանքների կրկնակի իրականացման բացառումը, նշելով, որ դրա համար կարևոր է նաև ԷԿԵՆԳ-ի հետ համագործակցությունը և նրանց կողմից խորհրդատվության տրամադրումը: Նա նշեց նաև, որ դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ իրականացվելիք աշխատանքները պետք է չդանդաղեն՝ պայմանավորված պետական համակարգի ամբողջ թվայնացման գործընթացով, որի համար անհրաժեշտ է համագործակցել Հայաստանի թվայնացման խորհրդի հետ:

Կառավարության խմբակցության ներկայացուցիչը կարևորեց պետական ավտոմատացված համակարգերի կիբեր անվտանգության հարցը, շեշտելով, որ նոր համակարգի ներդրման ժամանակ պետք է հաշվի առնվեն գործող համակարգերի անվտանգային կանոնները:

6. Հանքարդյունաբերության ռազմավարության մշակման աշխատանքների ընթացքի ներկայացում

Ներկայացվեց այն մասին, որ հանքարդյունաբերության ռազմավարությունը մշակվում է անկախ խորհրդատվական Գրանթ Թորնթոն ընկերության կողմից՝ Համաշխարհային բանկի դրամաշնորհի միջոցների հաշվին: 2021թ. սեպտեմբերի 7-ին կնքվել է պայմանագիր նշված ընկերության հետ, որում պատվիրատու կողմ է հանդիսանում Տարածքային զարգացման հիմնադրամը: Հայաստանի Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, որպես ընդերքի օգտագործումը կառավարող մարմին, վերահսկում և համակարգում է ողջ գործընթացը:

Պայմանագրի ընդհանուր արժեքն է մոտ 105 մլն դրամ, որի 16.5 մլն-ը կազմում է պետության համաֆինանսավորումը: Պայմանագրի կնքումից հետո վճարվել է 20 մլն դրամ՝ որպես կանխավճար, մնացած գումարը պետք է վճարվեր 4 փուլով: Սակայն, փետրվար ամսին, երբ պետք է կատարվեր հերթական վճարումը, նախարարությունը որոշակի դժգոհություններ ունեցավ աշխատանքների ընթացքից, բանակցությունների արդյունքում պայմանագրի ժամկետը երկարաձգվեց մինչև 2021թ. հունիսի 21-ը, և համապատասխանաբար, երկարաձգվեցին նաև հերթական վճարումների ժամկետները: Աշխատանքների սկզբում նախարարության կողմից Գրանթ Թորնթոն ընկերությանն են տրամադրվել բոլոր շահագրգիռ կողմերի տվյալները: Խորհրդատուի թիմը բազմաթիվ հանդիպումներ և քննարկումներ է անցկացրել շահագրգիռ կողմերի, թիրախային և մասնագիտական խմբերի հետ, այդ թվում Լոռու և Սյունիքի մարզերում: Այժմ ռազմավարության լրամշակված երկրորդ նախագիծն է ներկայացվել շահագրգիռներին և համապատասխան մեկնաբանությունների համար ժամկետ է սահմանվել ս.թ. մայիսի 5-ը, որից հետո դրանք կտրամադրվեն խորհրդատուի թիմին: Նշվեց, որ վերջնական փաստաթղթի որակի համար շատ կարևոր է նախագծի քննարկումներում մեծ ակտիվության ապահովումը:

ԲՇԽ-ի նախագահը **խնդրեց** ԲՇԽ-ի խմբակցություններին ավելի մեծ ակտիվություն հանդես բերել նախագծի վերաբերյալ կարծիքներ և դիտարկումներ ներկայացնելու գործում, և **հանձնարեց** հանձնարարական ուղարկել ՏԿԵՆ-ի ներկայացրած ցանկով այն պետական մարմիններին, որոնք թերի դիտարկումներ են տրամադրել մինչ այս պահը շրջանառված փաստաթղթերի վերաբերյալ: ՏԿԵ նախարարի տեղակալին ասվեց, որ հանձնարարականը ուղարկելուց հետո նախարարությունը ինքը պետք է հետամուտ լինի շահագրգիռ պետական մարմինների ավելի մեծ ներգրավվածություն ապահովելու համար:

Նիստի այլ մասնակիցները նշեցին, որ ռազմավարության առաջին նախագծի վերաբերյալ բավականին շատ դիտողություններ են ներկայացվել: Մանավանդ վերջին ֆոկուս խմբի հետ հանդիպման ժամանակ, երբ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, և բիզնես ընկերությունները շատ հարցեր են առաջ քաշել, որոնք խորհրդատուի համար օգտակար են եղել, և սպասվում է, որ դրանք նորացված երկրորդ նախագծում հաշվի են առնված:

Բիզնես խմբակցության ներկայացուցիչն առաջարկեց, որպեսզի երկարաձգվի հանքարդյունաբերության ռազմավարական փաստաթղթի պատրաստման ժամկետը, որպեսզի հնարավոր լինի ստանալ լիարժեք փաստաթուղթ: Կառավարության խմբակցության ներկայացուցիչը պարզաբանեց, որ ըստ կնքված պայմանագրի՝ Գրանթ Թորնթոն խորհրդատվական ընկերությունն աշխատանքը հանձնելու է ս.թ. հունիսի 21-ին, սակայն մինչև այդ, և մինչև հոկտեմբեր ամիսը, երբ փաստաթուղթը պետք է ներկայացվի

կառավարություն, շահագրգիռ կողմերը հնարավորություն ունեն առաջադրել իրենց տեսակետները և ընդունելի լինելու պարագայում՝ ակտիվ համագործակցության միջոցով դրանք արտացոլել ռազմավարության փաստաթղթում:

Քաղաքացիական հասարակության խմբակցության ներկայացուցիչը մտահոգություն հայտնեց, որ ռազմավարությունը մշակող Խորհրդատուի թիմում չկան քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և անկախ փորձագետներ: Նշվեց նաև, որ քաղաքացիական հասարակության խմբակցությունը բավականին շատ առաջարկներ է ներկայացրել և հուսով են, որ լրամշակված տարբերակում դրանք հաշվի առնված կլինեն և ավելի մեջ շեշտադրում արված կլինի շրջակա միջավայրի խնդիրներին:

Կառավարության խմբակցության ներկայացուցիչը հակադարձեց, որ Խորհրդատուի կողմից ներկայացված ամբողջական նախագծային փաթեթները կարծիքի են տրամադրվում բոլոր շահագրգիռ կողմերին, այդ թվում, նաև ԱՃԹՆ-ի հարթակի միջոցով:

7. Այլ հարցերի քննարկում

7.1. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակման նպատակահարմարության քննարկում

Ներկայացվեց, որ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունն ԱՃԹՆ-ի ազգային համակարգողների հետ աշխատանքային զանգերի և Պայմանագրերի թափանցիկության աշխատանքային խմբի քննարկումների ժամանակ բարձրացրել է այս հարցը և անդամ երկրներին առաջարկել է մեկ անգամ ևս անդրադառնալ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պայմանագրերը ևս հրապարակելու նպատակահարմարության հարցին: ԱՃԹՆ-ի ստանդարտը հստակ պահանջ չունի դրանք հրապարակելու վերաբերյալ, սակայն Ստանդարտի ուղեցույցում սահմանված են այն դեպքերը, երբ բազմաշահառու խումբը կարող է որոշել հրապարակել այդ պայմանագրերը: Ըստ ուղեցույցի՝ ընդերքօգտագործման պայմանագրերը պետք է հրապարակվեն, եթե դրանցով նախատեսվում են էական վճարումներ պետությանը և(կամ) համայնքներին, կամ պարունակում են այնպիսի ոչ ֆիսկալ պարտավորություններ, որոնք հանրությանը հետաքրքիր կլինեին: Սակայն ակներևաբար երկրաբանական ուսումնասիրության պայմանագրերում նման ֆինանսական պարտավորություններ չկան: Ինչ վերաբերվում է այդ պայմանագրերում հանրության համար հետաքրքրություն ներկայացնող բովանդակային դրույթների հնարավոր առկայությանը, ապա ԲՇԽ-ն պետք է

հավաստիանա՝ եթե դրանք առկա են և որոշում կայացնի հրապարակելու վերաբերյալ: Նաև նշվեց, որ 2018 թվականին, երբ քննարկվում էր պայմանագրերի հրապարակման հարցը, հպանցիկ անդրադարձ եղել է նաև երկրաբանական ուսումնասիրության պայմանագրերին և այդ ժամանակ ԲՇԽ-ն որոշել է, որ դրանք էական չեն:

Լիազոր մարմինների ներկայացուցիչները պարզաբանումներ ներկայացրեցին երկրաբանական ուսումնասիրության պայմանագրերի պարունակության վերաբերյալ: Ասվեց, որ դրանց բովանդակային մասը թույլ է տալիս ընդամենը կանխատեսել, թե ինչ արդյունահանման պայմանագրեր հետո կարող են կնքվել: Նկատվեց նաև, որ նույնիսկ եթե դիտարկվեն ընդերքի երկրաբանական ուսումնասիրությամբ զբաղվող ընկերության բոլոր եկամուտներն ու հոսքերը, ապա դա կաղճատի ընդերքօգտագործումից առաջացող եկամուտների ընդհանուր պատկերը, քանի որ դրանք գոյանում են նման ընկերության այլ՝ ընդերքօգտագործման հետ կապ չունեցող բիզնես գործունեությունից:

ԱՃԹՆ-ի քարտուղարության ներկայացուցիչը ընդգծեց, որ ներկայումս հանրության համար արդեն հասանելի են ՏԿԵՆ-ի կայքում հրապարակվող երկրաբանական ուսումնասիրությունների թույլտվությունների ռեգիստրը, դրանց ժամկետները, ուսումնասիրության տեղանքների կոորդինատները, իսկ ուսումնասիրության պայմանագրերի կոնտեքստուալ մասը կարելի է հանրությանը հասանելի դարձնել դրա օրինակելի ձևի հրապարակմամբ: Որոշում կայացնելիս պետք է հաշվի առնել նաև երկրի անվտանգային հարցերը:

Ընդերքօգտագործող ընկերությունների խմբակցության ներկայացուցիչը հրապարակմանը դեմ արտահայտվեց և նշեց, որ երկրաբանական ուսումնասիրությունները կարող են տևել մինչև 7-8 տարի, ընկերությունները չեն համարվում ռոյալթի վճարող, վճարվում է միայն 50 հազար դրամի պետական տուրք, որը ոչ մի էական նշանակություն չունի:

Քաղ. հասարակության ներկայացուցիչը կողմ արտահայտվեց հրապարակմանը, նշելով, որ ուսումնասիրության ժամանակ բնապահպանական վնասներ են պատճառվում՝ հորատանցքեր են փորվում, փորձանմուշներ են հանվում մեծ քանակով, այդ պայմանագրերը թույլ են տալիս ներգրավել մեծ դրամական միջոցներ, ու քանի որ ուսումնասիրության պայմանագրերը, որպես կանոն, հիմք են հանդիսանում հետագա արդյունահանման պայմանագրերի կնքման համար, ուստի դրանք պետք է թափանցիկ լինեն:

Նիստի նախագահողն այս հարցի վերաբերյալ **առաջարկեց** խմբակցություններին ևս մեկ անգամ քննարկել կողմ և դեմ բերված փաստարկները, և այնուհետ, գուցե,

էլեկտրոնային քվեարկության միջոցով որոշում կայացնել այդ պայմանագրերի հրապարակման վերաբերյալ: Միաժամանակ, **հանձնարարվեց** քննարկումների ժամանակ չհրապարակել գաղտնի համարվող տեղեկատվություն:

7.2. Լրացուցիչ առաջարկությունների քննարկում

7.2.1.Կառավարության խմբակցության ներկայացուցիչն առաջարկեց քննարկել ԱՃԹՆ-ի ստանդարտը նաև վերականգնվող էներգետիկայի, մասնավորապես ՀԷԿ-երի գործունեության ոլորտի նկատմամբ կիրառելու իրատեսականությունը և կարևորեց, մասնավորապես հիդրոէներգետիկայի ոլորտի բարձր աստիճանի թափանցիկության ապահովման խնդիրը: ԱՃԹՆ-ի քարտուղարության ներկայացուցիչը տեղեկացրեց, որ ԲՇԽ-ի նախկին որոշմամբ խորհրդատու կազմակերպությանը պատվիրվել էր ուսումնասիրել ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղների վերամշակման ոլորտի նկատմամբ ԱՃԹՆ-ի ստանդարտը տարածելու նպատակահարմարությունը և համաձայն ուսումնասիրության արդյունքների՝ որոշվել է առայժմ ձեռնպահ մնալ այդ ոլորտի ուղղությամբ ԱՃԹՆ-ն ընդլայնելու որոշումից՝ հաշվի առնելով նշված ոլորտներից առաջացած եկամուտների ոչ էականությունը: Ներկայումս, ԱՃԹՆ-ի միջազգային խորհուրդը հատուկ կարևորություն է տալիս էներգետիկ անցման շրջանում ԱՃԹՆ-ի կիրառմանը, և ԱՃԹՆ-ի անդամ երկիր հանդիսացող Ալբանիան և Ֆիլիպինները ՀԷԿ-երի գործունեության նկատմամբ կիրառում են ԱՃԹՆ-ի ստանդարտը: Այդ առումով առաջարկվեց նախապես ուսումնասիրել նշված երկրների փորձը և այնուհետ անդրադառնալ Հայաստանում դրա կիրառման քննարկմանը:

7.2.4. Բիզնես խմբակցության ներկայացուցիչը մտահոգություն արտահայտեց լիազոր մարմինների աշխատանքի վերաբերյալ: Ասվեց, որ ընկերությունների պարտավորությունների շրջանակը քննարկելիս որպես ուղենիշ բերվում է մրջազգային առաջատար փորձը, մինչդեռ լիազոր մարմիններն ընկերությունների հետ աշխատելիս երբեք չեն կիրառում Նորվեգիայի նման երկրների փորձը, պետական մարմիններում ամիսներով անպատասխան են մնում ընկերությունների հարցադրումները, ընկերությունների դիմումներին և փաստաթղթերին առանց բացատրության ընթացք չեն տրվում, խախտվում են օրենսդրության պահանջները և նման աշխատաոճն անընդունելի է: Բիզնես խմբակցության ներկայացուցիչն առաջարկեց աշխարհի առաջավոր փորձը կիրառել նաև ընկերության հանդեպ գործընթացներում:

7.2.2. Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն առաջարկեցին օրենսդրորեն ամրագրել ընդերքօգտագործող ընկերությունների փոխադրամիջոցները

գործունեության վայրի համայնքում, որպեսզի համապատասխան գույքահարկը վճարվի հենց այդ համայնքում: Նիստի նախագահողն **առաջարկեց**, որպեսզի այդ առաջարկի հնարավորությունը ուսումնասիրվի մշակվող ռազմավարական փաստաթղթի շրջանակում և արդյունքները համապատասխանորեն արտացոլվեն փաստաթղթում:

Հավելված 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՃԹՆ-Ի 4-ՐԴ՝ 2020-2021 ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐԻՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑԻ ՇՐՋԱՆԱԿԻ ՈՒ ԷԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԵՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՇԽ-Ի ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. **ԱՃԹՆ-ի 4-րդ ազգային զեկույցը պատրաստվելու է 2020-2021 ֆինանսական տարիների համար և ներկայացնելու է Հայաստանի մետաղական հնաքնարդյունաբերության ոլորտը:**

2. **ԱՃԹՆ-ի 4-րդ զեկույցի համար հաշվետու պետական մարմիններն ու ընդերքօգտագործող ընկերությունները**

2020 ֆինանսական տարվա համար հաշվետու պետական մարմինները և ընդերքօգտագործող ընկերությունները

Համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ մինչև 2021 թվականի օգոստոսի 1-ը պետական մարմինները՝ Պետական եկամուտների կոմիտեն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, համայնքները (տվյալները ներկայացվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջոցով) և 2021 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ մետաղական հանքաքարի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ունեցող բոլոր ընկերությունները, բացառությամբ սնանկ ճանաչվածների, ԱՃԹՆ-ի reports.eiti.am առցանց հաշվետվությունների համակարգի միջոցով ներկայացրել են 2020 հաշվետու տարվա հրապարակային հաշվետվությունները:

ԲՇԽ-ն **որոշել է**, որ 2021 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ դադարեցված ընդերքօգտագործման թույլտվությամբ ընկերությունների համար հրապարակային հաշվետվություններ ներկայացվեն միակողմանի՝ միայն հաշվետու պետական մարմինների կողմից, քանի որ օրենքի համաձայն այդ ընկերություններն այլևս չեն համարվել ընդեքօգտագործող, հետևաբար հրապարակային հաշվետվություններ ներկայացնելու պարտավորություն չեն ունեցել:

2020թ. հրապարակային հաշվետվությունները կազմելիս կողմերի համար հիմք է ընդունվել 31.05.2021թ. դրությամբ հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով (ճշգրտված հաշվարկով), հայտարարագրով (ճշգրտված հայտարարագրով) հաշվարկված, ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրության արձանագրությամբ) հաշվարկված (ներառյալ տույժերը և տուգանքները) տվյալները:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Շրջակա միջավայրի նախարարությունը չի տիրապետում տույժերի և տուգանքների վերաբերյալ տեղեկատվությանը՝ հաշվետու տարում բոլոր ընդերքօգտագործողների մասով տույժերի և տուգանքների վերաբերյալ տվյալները Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը վարչապետի հանձնարարականի համաձայն՝ սահմանված ձևաչափով ներկայացրել է Շրջակա միջավայրի նախարարություն, որը դրանք ներառել է 2020 հաշվետու տարվա հրապարակային հաշվետվություններում:

2021 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ մետաղական հանքաքարի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ունեցող բոլոր ընկերությունների ցանկը և պարզաբանումները ներկայացվում են հավելված 1-ում:

2021 ֆինանսական տարվա համար հաշվետու պետական մարմինները և ընդերքօգտագործող ընկերությունները

Ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը պետական մարմինները՝ Պետական եկամուտների կոմիտեն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, համայնքները (տվյալները ներկայացվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջոցով) և 2022 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ մետաղական հանքաքարի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ունեցող բոլոր ընկերությունները, բացառությամբ սնանկ ճանաչվածների, reports.eiti.am առցանց հաշվետվությունների համակարգի միջոցով պետք է ներկայացնեն 2021 հաշվետու տարվա հրապարակային հաշվետվությունները:

2022 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվետու ընկերությունների ցանկը կճշտվի ՏԿԵՆ-ի հետ:

ԲՇԽ-ն **որոշում է**, որ 2022 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ դադարեցված ընդերքօգտագործման թույլտվությամբ, սակայն 2021 թվականի ընթացքում ընդերքօգտագործման իրավունք ունեցած ընկերությունների համար հրապարակային հաշվետվությունները կներկայացվեն միակողմանի՝ միայն հաշվետու պետական մարմինների կողմից, քանի որ օրենքի համաձայն այդ ընկերություններն այլևս ընդեքօգտագործող չեն համարվում, հետևաբար հրապարակային հաշվետվություններ ներկայացնելու պարտավորություն չունեն:

3. Հրապարակային հաշվետությունների ձևաչափը

2020 հաշվետու տարվա հրապարակային հաշվետվությունները ներկայացվել են համաձայն ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի «Ընդերքօգտագործման հետ

կապված գործունեության վերաբերյալ օգտակար հանածոյի արդյունահանման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակելու կարգը, ժամկետները և ձևերը, մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների գործունեության վերաբերյալ հրապարակային հաշվետվությունը ներկայացնելու կարգը, ժամկետները և ձևերը, ինչպես նաև պետական մարմինների ցանկը սահմանելու մասին» N 666-Ն որոշման (այսուհետև՝ Որոշում):

2022 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ վարչապետի աշխատակազմի ԱՃԹՆ-ի քարտուղարության համակարգմամբ կմշակվի և ՀՀ կառավարություն կներկայացվի Որոշման փոփոխությունների նախագիծը՝ այն 2021 թվականին ուժի մեջ մտած օրենսդրական կարգավորումներին, ինչպես նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի 3-րդ զեկույցում ներկայացված ԲՇԽ-ի կողմից ընդունելի առաջարկություններին համապատասխանեցնելու նպատակով: Որոշման նախագիծը կքննարկվի նաև անկախ ադմինիստրատորի հետ, եթե դրա մշակման ժամանաընթացքում ընտրված լինի ԱՃԹՆ-ի 4-րդ զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորը և նրա հետ կնքված լինելի խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր: Հաշվետվությունների ձևերում կատարվելիք փոփոխությունները պետք է հնարավորինս չխաթարեն առցանց հաշվետվությունների համակարգի աշխատանքը՝ առաջնորդվելով նվազագույն փոփոխություններ կատարելու կամ ընդհանրապես փոփոխություններ չկատարելու սկզբունքով:

4. Հաշվետվությունների ներկայացումը

ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունները ներկայացվում են ԱՃԹՆ-ի առցանց հաշվետվությունների հարթակի միջոցով: 2020 հաշվետու տարվա հրապարակային հաշվետվությունները պարտավորություն ունեցող պետական մարմինները և ընկերությունները ներկայացրել են մինչև 2021 թվականի օգոստոսի 1-ը: 2021 հաշվետու տարվա հրապարակային հաշվետվությունները ընդերքօգտագործողները և պետական մարմինները պետք է ներկայացնեն ոչ ուշ, քան մինչև 2022թ. օգոստոսի 1-ը:

5. Համադրվող ընկերությունները

Բազմաշահառու խմբի որոշմամբ 2020 և 2021 ֆինանսական տարիների համար համադրվող են համարվում այն ընկերությունները, որոնք հաշվետու յուրաքանչյուր ֆինանսական տարում ՀՀ պետական բյուջե են վճարել 150 միլիոն դրամին համարժեք

կամ այն գերազանցող գումարի հարկեր և վճարումներ: Համադրման սույն շեմը կիրառվել է նաև 2016-2019 թվականների համար:

6. ԱՃԹՆ-ի զեկույցում/հաշվետվություններում ներկայացվող հարկերը և եկամուտները

2020 հաշվետու տարվա համար

ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվություններում ընդերքօգտագործողները և պետական մարմինները երկուստեք ներառել են տվյալներ հետևյալ հարկերի ու վճարումների մասին (առանց շեմերի).

1. շահութահարկ
2. եկամտային հարկ
3. ավելացված արժեքի հարկ
4. ակցիզային հարկ
5. ռոյալթի
6. բնօգտագործման վճարներ
7. բնապահպանական հարկ
8. մաքսային տուրքեր և վճարներ
9. ազնիվ, սև, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք
10. ջրօգտագործման թույլտվության տրամադրման պետական տուրք
11. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում
12. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումներ ընկերությանը
13. մշտադիտարկումների իրականացման վճարներ
14. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման տուրք
15. հողի հարկ[1]
16. գույքահարկ
17. հողի ձեռքբերում

[1] 2021 թվականի հունվարից տեղական հարկեր հողի հարկը և գույքահարկը միավորվել են որպես անշարժ գույքի հարկ, Հարկային օրենսգիրք, բաժին 11՝ անշարժ գույքի հարկը, գլուխ 45՝ անշարժ գույքի հարկը և վճարողները, հոդված 224

18. հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերության վճարում
19. ՏԻՄ-ին (համայնքին) վճարված վարձակալության վճար
20. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից նշանակված տույժեր և տուգանքներ
21. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված՝ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունները
22. ԱՏԳ ԱԱ դասակարգչի 2603000000 ծածկագրին դասվող պղնձի խտահանք արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրքի (կիրառելի է 2021թ. համար)[2]
23. ԱՏԳ ԱԱ դասակարգչի 2613 ծածկագրին դասվող մոլիբդենի խտահանքեր արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրքի (կիրառելի է 2021թ. համար)
24. ԱՏԳ ԱԱ դասակարգչի 7202700000, 8102 ծածկագրին դասվող մոլիբդենի (բացառությամբ 810297000) արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրքի (կիրառելի է 2021թ. համար)

Միակողմանի՝ միայն ընկերությունները, տրամադրում են տվյալներ հետևյալ ֆինանսական հոսքերի համար.

1. Ընդերքօգտագործողի կողմից համայնքին կատարված բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումները
2. ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրված նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները (ըստ կազմակերպությունների)
3. Ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները (ընդհանուր գումարը և ֆիզիկական անձանց թիվը):

[2] 22-24-րդ կետերը վերաբերելի են միայն 2021 հաշվետու տարվան

Միակողմանի՝ միայն պետության կողմից բացահայտվող էական եկամտային հոսքեր առկա չեն:

Անկախ ադմինիստրատորը համադրելու է հարկային հաշվարկով (հաշվեգրման մեթոդով) ներկայացված տվյալները:

2021 հաշվետու տարվա համար պահպանվելու է տվյալների 2020թ. համար սահմանված վերը նշված շրջանակը՝ հաշվի առելով հաշվետու տարվա մեջ ուժի մեջ մտած օրենսդրական կարգավորումները:

7. Համադրման համար էական ֆինանսական հոսքերը և համադրվող ֆինանսական հոսքի ներկայացման մեթոդը

2018 և 2019 թվականների համադրման նպատակով ընտրվել է 9 ընկերություն, որոնց գծով համադրվել են 7 հարկատեսակներ և վճարներ: 2019 թվականին զուտ տարբերությունը կազմել է 0.2% (կամ 193,133 հազար դրամ): Համադրման գործընթացից հետո տարբերությունը կազմել է 23,299 հազար դրամ, կամ 0.03%: Տարբերություններ գրանցվել են աղյուսակում ներկայացված եկամտային հոսքերի գծով:

Պետական մարմինների և ընկերությունների կողմից ներկայացված հաշվետվությունների համադրման արդյունքներ (հազար դրամ)՝ ըստ 2019թ. ազգային զեկույցի 6.3.1 աղյուսակի

Հարկի/ վճարի տեսակ	Ըստ 2019 սկզբնական հաշվետվությունների			Ըստ 2019 ճշգրտված հաշվետվությունների		
	Պետական մարմիններ	Ընկերություն-ներ	Տարբերություն	Պետական մարմիններ	Ընկերություն-ներ	Տարբերություն
Ռոյալթի	37,426,583	37,450,399	(23,816)	37,426,583	37,450,399	(23,816)
Եկամտային հարկ	18,845,263	18,875,607	(30,344)	18,882,714	18,875,607	7,107
Շահութահարկ	17,975,905	17,975,905	-	17,975,905	17,975,905	-
Ավելացված արժեքի հարկ	5,544,796	5,703,803	(159,007)	5,544,796	5,553,643	(8,848)
Ոչ ռեզիդենտի շահութահարկ	2,348,969	2,346,305	2,663	2,348,969	2,346,305	2,663
Մաքսատուրք, մաքսավճար	1,443,972	1,399,194	44,778	1,443,972	1,443,453	519
Վարձավճարներ	881,254	908,661	(27,407)	881,254	882,178	(924)
Ընդամենը	**84,466,741**	**84,659,874**	**(193,133)**	**84,504,193**	**84,527,491**	**(23,299)**

Համաձայն անկախ ադմինիստրատորի եզրակացության[3]՝ տարբերությունների պատճառները հիմնականում հաշվետվությունների լրացման ժամանակ մեխանիկական սխալներն են եղել:

Նմանատիպ պատկեր է գրանցվել նաև 2018 հաշվետու տարվա համադրման ժամանակ:

Հաշվի առնելով տվյալների տարբերությունների նվազման դրական միտումը և դրանց ոչ էականությունը՝ պայմանավորված հաշվետվու պետական մարմինների և ընկերությունների պատասխանատուների՝ հաշվետվություն լրացնելու հմտությունների ամրապնդմամբ և մեխանիկական սխալներ կատարելու ռիսկի նվազմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով զեկույցների կազմման ֆինանսական արդյունավետության ապահովման անհրաժեշտությունը և «ճկուն հաշվետվողականության» վերաբերյալ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության խորհուրդները՝ 2020 և 2021 ֆինանսական տարիների համար համադրվող կհամարվեն արդյունահանման գործունեության հետ ուղղակի կապված էական և մեխանիկական սխալներ կատարելու տեսանկյունից ավելի ռիսկային հետևյալ 5 եկամտային հոսքերը.

Համադրվելիք եկամտային հոսքը	Հիմնավորումը	Համադրվող ֆինանսական հոսքի ներկայացման մեթոդը
1. Ռոյալթի	ոլորտից էական եկամտային հոսք	համադրվելու է հարկային հաշվարկով (հաշվեգրման մեթոդով) ներկայացված տվյալը
2. Ավելացված արժեքի հարկ	հաշվետվություն լրացնելիս մեխանիկական սխալի ռիսկ	համադրվելու է հարկային հաշվարկով (հաշվեգրման մեթոդով) ներկայացված տվյալը
3. Մաքսատուրք, մաքսավճար	հաշվետվություն լրացնելիս մեխանիկական սխալի ռիսկ	համադրվելու է հարկային հաշվարկով (հաշվեգրման մեթոդով) ներկայացված տվյալը
4. Վարձավճարներ	հաշվետվություն լրացնելիս մեխանիկական սխալի ռիսկ	համադրվելու են փաստացի դրամական վճարումները
5. Ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված	նախորդ զեկույցների կազմման ընթացքում համայնքերի ու ընկերությունների տվյալների անհամապատասխանության հետ կապված խնդիրներ	Համադրվելու են փաստացի դրամական վճարումները: Համադրումը չի կարող իրականացվել ոչ ֆինանսական պարտավորությունների դեպքում, քանի որ դրանց դրամական գնահատականը (ինքնարժեքը) ներկայացվում է միայն ընկերությունների կողմից: Սակայն այն

[3] ԱՃԹՆ-ի 3-րդ ազգային զեկույցի 6.3-րդ՝ «Համադրման գործընթացի նկարագրությունը և արդյունքները» բաժին https://www.eiti.am/hy/annual-reports/2021,
ԱՃԹՆ-ի 2-րդ ազգային զեկույց 6.2-րդ՝ «Համադրման գործընթացի ամբողջականությունը» բաժին https://www.eiti.am/hy/annual-reports/2020

պարտավորություններ		դեպքում, երբ ընկերության կողմից ներկայացված դրամական գնահատականը գերազանցում է սահմանված էականության շեմը, Անկախ ադմինիստրատորը անհրաժեշտության դեպքում պետք է ստացված ոչ ֆինասական ներդրման (ապրանքի և/կամ ծառայության) վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն ստանա ապրանքը կամ ծառայությունը ստացած համայնքից և այն ներկայացնի զեկույցում:

8. Համադրման դեպքում թույլատրելի/ոչ էական շեղման սահմանաչափ

Անկախ ադմինիստրատորի կողմից վերջնական համադրման նպատակով կհետաքննվի ֆինանսական այն հոսքի վերաբերյալ տվյալի տարբերությունը, որի անհամապատասխանության չափը երկուստեք ներկայացված հաշվետվությունում կազմում է ֆինանսական տվյալի 4 տոկոսը, սակայն ոչ պակաս քան 1 միլիոն ՀՀ դրամը: Նշված հաշվարկի համար հիմք է հանդիսանում այն կողմի ներկայացրած տվյալը, որն ավելի փոքր է: Սույն սկզբունքը կիրառվել է նաև 2016-2019թթ. Ֆինանսական հոսքերի տվյալները համադրելիս:

9. ՀՀ ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում ոչ կիրառելի ֆինանսական հոսքեր

Հիմք ընդունելով Հայաստանի ԱՃԹՆ-ի 2016-2017թթ, 2018թ. և 2019թ. ազգային զեկույցների բացահայտումները, այլ վերլուծություններ ու քննարկումներ՝ ԲՇԽ-ն որոշում է, որ ՀՀ ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում 2020 և 2021 ֆինանսական տարիների համար ոչ կիրառելի ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներն ու ֆինանսական հոսքերն են՝

1. ոլորտից բնաիրային եկամուտները,

2. քվազի-ֆիսկալ ծախսերը, ենթակառուցվածքներին վերաբերող դրույթները և ապրանքափոխանակության կարգավորումները (4.3)

3. փոխադրումներից ստացվող էական եկամուտները (4.4)

4. արտիզանային (artisanal) և փոքրամասշտաբ հանքարդյունահանումը, քանի որ ԱՃԹՆ-ի նախորդ զեկույցներում նշվել է, որ «Հայաստանում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում բացակայում է արտիզանային և փոքրամասշտաբ արդյունահանումը: Քանի որ Հայաստանում չկան հանրությանը հասանելի

արժանահավատ գնահատականներ երկրի հանքարդյունաբերությունում առկա ոչ ֆորմալ ոլորտի վերաբերյալ, սույն գործունեության վերլուծության նպատակով ուսումնասիրվել են ոչ ֆորմալ գործունեությանը վերաբերող հասանելի համապատասխան դատական ակտերը և վարչական մարմինների որոշումները: Ուսումնասիրության արդյունքում, հանքարդյունաբերության ոլորտում ոչ ֆորմալ գործունեությանը վերաբերող դատական գործեր չեն բացահայտվել: Հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները, ներառյալ դրա մասշտաբը, օրենսդրական կարգավորումները, վերահսկողությունը և հաշվետվողականության պահանջները՝ ակնկալվում է, որ այս ոլորտում ոչ ֆորմալ գործունեություն չկա»:

ԱՃԹՆ-ի 4-րդ ազգային զեկույցում այս հարցերին անդրադառնալու անհրաժեշտություն չկա:

10. Պետության մասնակցությունը

2020 թվականին մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերություններում **պետական մասնակցություն չի եղել**:

Անկախ ադմինիստրատորը պետք է ուսումնասիրի 2021թ. տեղի ունեցած փոփոխությունները, մասնավորապես, Հայաստանի մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերություններում պետական մասնակցության առկա վիճակը և այդ մասով ԲՇԽ-ին առաջարկություններ ներկայացնի ԱՃԹՆ-ի ստանդարտի համապատասխան պահանջների կիրառելիության վերաբերյալ:

ԱՃԹՆ-ի ստանդարտի 2.6-րդ, 4.2-րդ, 4.3-րդ, 4.4-րդ, 4.5-րդ և 6.2-րդ պահանջների կիրառելիությունը որոշելու համար Անկախ ադմինիստրատորը պետք է ուսումնասիրի Հայաստանի մետաղական արդյունահանող ճյուղերում պետության մասնակցությանն առնչվող իրավական կարգավորումները, բացահայտի առկա մասնակցության դեպքերը և ձևաչափը, գնահատի նման մասնակցությունից պետության ստացած հնարավոր եկամուտների չափը և ԲՇԽ-ին ներկայացնի առաջարկություններ՝ դրանց էականության վերաբերյալ: Իր առաջարկությունները մշակելիս՝ Անկախ ադմինիստրատորը պետք է խորհրդակցի ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության պատասխանատուների և ԲՇԽ-ի հետ:

Պետության մասնակցությունից վերջինիս ստացած եկամուտները ԲՇԽ-ի կողմից էական համարվելու դեպքում՝ Անկախ Ադմինիստրատորը պետք է ներկայացնի ԱՃԹՆ-ի ստանդարտի վերոնշյալ պահանջներին վերաբերվող տեղեկությունների բացահայտումն

ապահովող անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ և իրավական ակտերի համապատասխան նախագծեր:

11. Սոցիալ-տնտեսական պարտավորությունները

ԱՃԹՆ-ի զեկույցում պետք է ընդգրկվեն օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված՝ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունները, համայնքներում կատարված կամավոր սոցիալական ներդրումները, ինչպես նաև ոչ առևտրային իրավաբանական և ֆիզիկական անձանց օգտին կատարված վճարումները:

Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունները կհամադրվեն առանց էականության շեմ կիրառելու:

12. Եկամուտների վերաբաշխումը

Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգը հնարավորություն չի ընձեռում ներկայացնել հանքարդյունաբերությունից ստացված եկամուտների բաշխումը: Սակայն զեկույցում պետք է ներկայացվեն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն 2020 և 2021թթ. ընթացքում ազդակիր համայնքներին հատկացված սուբվենցիաները և համապատասխան բնապահպանական նպատակային ծրագրերը: Այդ տեղեկությունը պետք է ներկայացվի ամբողջ ծավալով՝ հաշվի առնելով Հայաստանի 1-ին վավերացման հաշվետվության մեջ ներկայացված բացերը և հրապարակման ենթակա տեղեկության շրջանակը:

ԱՃԹՆ-ի զեկույցում մանրամասն պետք է ներկայացվեն՝

1) Հայաստանի Հանրապետության «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքով կարգավորվող ընթացակարգերը,
2) մետաղական հանքարդյունահանող ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի՝ ազդակիր համայնքներին վերաբաշխելու ենթակա ընդհանուր գումարի հաշվարկման հիմքը,
3) ընկերությունների կողմից հաշվետու տարում բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկներով հաշվարկված գումարը,
4) յուրաքանչյուր ազդակիր համայնքի համար հաշվարկված համամասնությունները,

5) յուրաքանչյուր ազդակիր համայնքի համար հաշվարկված գումարը,
6) յուրաքանչյուր համայնքին հատկացված ընդհանուր գումարը,
7) համայնքների բյուջեներ կատարված փաստացի փոխանցումները և
8) վերաբաշխման բանաձևի համաձայն հաշվարկված գումարիների, յուրաքանչյուր ազդակիր համայնքի համար հաշվարկված գումարների և յուրաքանչյուր ազդակիր համայնքի բյուջե փաստացի մուտքագրված գումարների տարբերությունները և դրանց պատճառները:

Լիազոր պետական մարմիններն անհրաժեշտության դեպքում պետք է մեկնաբանեն հնարավոր ցանկացած անհամապատասխանության պատճառները:

Շրջակա միջավայրի նախարարությունը պետք է տրամադրի յուրաքանչյուր համայնքին տրվող համամասնությունները և հաշվարկման հիմքը:

13. Տվյալների ապաագրեգացման աստիճանը (project-level reporting (ծրագրի մակարդակում հաշվետվություն ներկայացնելը))

ԲՇԽ-ն որպես ծրագիր է դիտարկում մեկ ընդերքօգտագործման իրավունքով/թույլտվությամբ իրականացվող գործունեությունը: 2020 և 2021 թվականների համար կազմվող զեկույցում այն բոլոր ֆինանսական հոսքերը, որոնք հնարավոր է ներկայացնել արդյունահանման թույլտվությունների մակարդակով, պետք է ներկայացվեն հենց այդ մակարդակում՝ հստակ նշում կատարելով այդ մասին:

14. Արտադրություն, արտահանում և զբաղվածություն

Հանքարդյունահանող ընկերությունները պետք է տրամադրեն **արդյունահանման, արտադրության, ներքին իրացման ու արտահանման** տվյալները՝ ըստ արտադրատեսակների: Արտադրատեսակները պետք է ներկայացվեն՝ ըստ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի:

Ներքին շուկայում արտադրության իրացման և արտահանման վերաբերյալ տվյալները ներկայացնելիս հանքարդյունահանող ընկերությունները պետք է տրամադրեն նաև մատակարարված արտադրատեսակում (խտանյութ, համաձուլվածք) վճարվող համարվող մետաղների վերջնական պարունակության վերաբերյալ տվյալներ՝ արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով):

Արտահանման տվյալները ներկայացնելիս Անկախ ադմինիստրատորը պետք է ներկայացնի ապաագրեգացված տվյալներ՝ ըստ ծագման տարածաշրջանի, ընկերության

կամ ծրագրի, ինչպես նաև ներակայացնի արտահանումների ծավալների և արժեքների հաշվարկման աղբյուրները և մեթոդները:

Ընկերությունները **զբաղվածության** վերաբերյալ տվյալները պետք է ներկայացնեն ըստ հետևյալ կատեգորիաների՝

- ✓ ըստ աշխատանքային պայմանագրի ժամկետայնության,
- ✓ ըստ աշխատողների քաղաքացիության՝ ՀՀ քաղաքացի և օտարերկրյա քաղաքացի,
- ✓ ըստ աշխատողների համայնքային ներկայացվածության,
- ✓ ըստ զբաղվածության մեջ կին-տղամարդ բաշխվածության, ինչպես նաև ըստ ընդամենը զբաղվածների մեջ ղեկավար պաշտոններ զբաղեցնող կին զբաղվածների թվի:

15. Տվյալների հուսալիություն և հավաստիության հաստատում

Հաշվետվություններում ներկայացվող տվյալների հուսալիությունն ու ճշգրտությունն հավաստիացնելու նպատակով հրապարակային հաշվետվությունները պետք է վավերացվեն ընկերության ղեկավարի կամ գլխավոր հաշվապահի և պետական մարմնի բարձրաստիճան պաշտոնյայի կամ իր տեղակալի էլեկտրոնային ստորագրությամբ:

Հաշվետվությունները ստորագրողներ են հանդիսանում՝

1) պետական կառավարման մարմինների ղեկավարները և (կամ) տեղակալը,

2) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործող ընկերության ղեկավարը կամ գլխավոր հաշվապահը:

16. Ներկայացնող տվյալների աուդիտը

Ընդերքօգտագործողները հաշվետվություններում պետք է ներկայացնեն տեղեկություն՝ հաշվետու տարվա համար իրականացված արտաքին ֆինանսական աուդիտի վերաբերյալ, և առկայության դեպքում, տրամադրեն ֆինանսական հաշվետվությունների և աուդիտորական եզրակացության հրապարակման հղումը, իսկ հաշվետվության՝ տպագիր մամուլում հրապարակված լինելու պարագայում, վերջինիս էլեկտրոնային պատճենը:

17. Ընդերքի հետախուզման կարևոր ծրագրերի նկարագրությունը

Զեկույցում պետք է ներկայացվի հաշվետու ժամանակաշրջանում իրականացված ընդերքի հետախուզման կարևոր ծրագրերի նկարագրությունը, ինչպես նաև հաշվետու տարվա ընթացքում երկրում հաստատված պաշարների ագրեգացված մեծությունը՝ ըստ հանքատեսակների: Պետք է ներկայացվեն նաև տեղեկություններ՝ ընթացիկ հետախուզման աշխատանքների փուլերի, ինչպես նաև այդ աշխատանքների իրականացման տարածաշրջանների վերաբերյալ:

18. Էներգետիկ անցման համատեքստում ԱՃԹՆ-ի հնարավոր դերի քննարկումը

Զեկույցում պետք է ներկայացվի բաժին, որը կքննարկի Հայաստանում էներգետիկ անցման գործընթացներում ԱՃԹՆ-ի հնարավոր դերը՝ հիմք ընդունելով ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և միջազգային խորհրդի կողմից պատրաստված փաստաթղթերը ու առաջարկները և ԱՃԹՆ-ի բնույթը՝ որպես այս կարևոր գործընթացներում թափանցիկությունը և հաշվետվողականությունը խթանող գործիք նաև էներգետիկ անցման համատեքստում: Աշխատանքներն իրականացնելիս՝ Խորհրդատուն պետք է խորհրդակցի ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԲՇԽ-ի հետ:

Հավելված 1

2020 թվականի համար հրապարակային հաշվետվություններ ներկայացնելու համար հաշվետու ընդերքօգտագործող ընկերությունների ցանկ

Պարզաբանում

- ✓ Համաձայն Ընդերքի օրենսգրքի՝ սնանկ ճանաչված ընդերքօգտագործողն ազատվում է հրապարակային հաշվտվություն ներկայացնելու պարտավորությունից:
- ✓ Ըստ ԲՇԽ-ի որոշումների և նախորդ տարիներին որդեգրված մոտեցման՝ 2021 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ դադարեցված ընդերքօգտագործման թույլտվությամբ ընկերությունների[4] համար հրապարակային հաշվետվություններ ներկայացվել են միակողմանի՝ միայն հաշվետու պետական մարմինների կողմից, քանի որ օրենքի համաձայն այդ ընկերություններն այլևս չեն համարվել ընդեքօգտագործող, հետևաբար պարտավորություն չեն ունեցել ներկայացնելու հրապարակային հաշվետվություններ:
- ✓ Այն ընկերությունները, որոնք բողոքարկել են ընդեքօգտագործման դադարեցումը **մինչև 2020թ. օգոստոսի 16-ը** և 2021թ. օգոստոսի 1-ի դրությամբ հայցն ընդունվել է դատական վարույթ, համարվել են ընդերքօգտագործողներ և, հետևաբար, ներկայացրել են հրապարակային հաշվետվություններ:

հ/հ	Ընդերքօգտագործող	Գրանցման համար	ՀՎՀՀ	Պայմանագրի համար և կնքման ամսաթիվ	Նշումներ	
1.	«Զաարատ Կապան» ՓԲԸ	27.120.01216	09416902	ՊՎ-183		

[4] Այն ընկերությունները, որոնք բողոքարկել են ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վարչական ակտը մինչև 2020 թվականի հուլիսի 16-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-399-Ն օրենքի ուժի մեջ մտնելը (16.08.2020թ.), համարվում են ընդերքօգտագործող, քանի որ ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին վարչական ակտը կասեցված է և ընդերքօգտագործման իրավունքի դադարեցումը ուժի մեջ չի կարող մտնել, քանի դեռ ավարտված չեն ընդերքօգտագործման իրավունքի կրողի նկատմամբ վերջինիս իրավունքի հետ կապված դատավարական գործընթացները:

Այն ընկերությունները, որոնք բողոքարկել են բողոքարկել են ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վարչական ակտը 16.08.2020թ.-ից հետո, վերջիններիս ընդերքօգտագործման իրավունքը համարվում է դադարեցված, քանի որ, համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-399-Ն օրենքի (83-րդ հոդվածի 1-ին մաս, 4.1-ին կետ), վիճարկման հայցի վարույթ ընդունելը չի կասեցնում ընդերքօգտագործման իրավունքի դադարման կամ կասեցման վարչական ակտի

				(27.11.2012)		
2.	«Գեղի Գոլդ» ՍՊԸ	72.110.121815	09423012	Պ-544 (22.07.2016)		
3.	«Բակտեկ էկո» ՍՊԸ	282.110.06759	00870494	Պ-515 (22.08.2014)		
4.	«Ղարագույաններ» ՓԲԸ	286.120.929505	02583292	Պ-547 (25.10.2016)		
5.	«Ատ-Մետալս» ՍՊԸ	271.110.738775	00118721	Պ-514 (16.01.2015)		
6.	«Վայք Գոլդ» ՍՊԸ	264.110.11124s5	00114369	Պ-371 (30.11.2012)	Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում Հր.711-Ա 19.12.2019թ. Բողոքարկվել է	
7.	«Սագամար» ՓԲԸ	278.120.03167	00410036	ՊՎ-093 (20.10.2012)		
8.	«Ասսաթ» ՍՊԸ	77.110.00569	03807664	ՊՎ-366 (06.06.2013)		
9.	«Մեղրաձր գոլդ» ՍՊԸ	286.110.07682	02709666	ՊՎ-057 (22.08.2012)		
10.	«Լեռ-Էքս» ՍՊԸ	27.110.00893	09412188	ՊՎ-094 (16.08.2012)		
11.	«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ	96.120.00632	06602309	ՊՎ-103 (20.10.2012)		
12.	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	273.110.02424	01530525	ՊՎ-189 (20.10.2012)		
13.	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	264.120.07314	00091919	ՊՎ-245 (26.09.2012)		

14.	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	79.140.00036	09700039	ՊՎ-311 05.04.2013		
15.	«Թեղուտ» ՓԲԸ	286.120.06078	02700773	ՊՎ-376 (20.02.2013)		
16.	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	27.140.00009	09400818	ՊՎ-232 (27.11.2012)		
17.	«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	273.110.03365	01544838	ՊՎ-425 (28.12.2012)		
18.	«Լիճքվազ» ՓԲԸ	286.120.07744	02710054	ՊՎ-293 (22.11.2012)		
19.	«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ	42.110.01460	03516447	ՊՎ-213 (20.10.2012)		
20.	«Վարդանի զարթոնք» ՍՊԸ	79.110.00234	09414399	ՊՎ-239 (27.09.2012)	Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում Հր.N 1075-Ա 07.08.2020թ. Վարչական ակտը 05.05.2021թ. դատարանի վճռով կասեցված է	Թիվ ՎԴ/8035/05/20 վարչական գործով ՀՀ վարչական դատարանը կայացրել է Ընկերության ներկայացրած «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշում /05.05.2020թ./, որի համաձայն՝ «Վարդանի Զարթոնքը» ՍՊ ընկերության ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է և ՏԿԵ նախարարի 07.08.2020թ. թիվ 1075-Ա հրամանի կատարումը կասեցվել է մինչև թիվ ՎԴ/8035/05/20 վարչական գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: ՏԿԵՆ-ը Վերաքննիչ դատարանի 05.05.2020թ. «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը բողոքարկել է Վճռաբեկ դատարան: Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 148–րդ հոդվածի 7–րդ մասի՝ վերաքննիչ դատարանի՝

						բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալու պահից 5 օր հետո: ՏԿԵՆ–ը ստացել է Վերաքննիչ դատարանի 05.05.2020թ. որոշումը 14.05.2021թ.–ին: «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշման վերաբերյալ Վճռաբեկ դատարանը դեռևս չի կայացրել այդ բողոքը վարույթ ընդունելու կամ վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում: Տվյալ պահին, բողոքը համարվում է ուժի մեջ մտած, քանի որ լրացել է օրենքով սահմանված 5–օրյա ժամկետը, ուստի ներկա պահին «Վարդանի Զարթոնքը» ՍՊ ընկերությունը համարվում է ընդերքօգտագործող:
21.	«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	286.110.05872	02580107	ՊՎ-174 (07.11.2012)	Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում Հր. N 1008-Ա 28.07.2020թ.	Թիվ ՎԴ/7404/05/20 վարչական գործով ՀՀ վարչական դատարանը 02.06.2021թ.–ին կայացրել է «Մոլիբդենի աշխարհ» ՍՊ ընկերության հայցադիմումը բավարարելու մասին դատական ակտ, որի համաձայն՝ «Մոլիբդենի աշխարհ» ՍՊ ընկերության ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին 28.07.2020թ. թիվ 1008–Ա հրամանը անվավեր է ճանաչվել: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով: Դատական ակտը DataLex դատական տեղեկատվական հարթակում դեռ հրապարակված չէ, ՏԿԵՆ–ը դեռ չի ստացել թիվ ՎԴ/7404/05/20 վարչական գործով Վարչական դատարանի դատական ակտը: Դատական ակտը չբողոքարկվելու և մեկամսյա ժամկետում ուժի մեջ մտնելու դեպքում «Մոլիբդենի աշխարհ» ՍՊ ընկերությունը կհամարվի ընդերքօգտագործող:
22.	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	39.110.01312	02806526	ՊՎ-169	Ընդերքօգտագործման	ՎԴ/8000/05/20 վարչական գործ.

				(20.10.2012)	իրավունքի դադարեցում Հր. N 1033-Ա 31.07.2020թ.	Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է, կասեցվել է «Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի հուլիսի 31-ի թիվ 1033-Ա հրամանի կատարումը: Ընկերությունը համարվում է ընդերքօգտագործող:
Ստորև ընկերությունների համար 2020 հաշվետու տարվա հրապարակային հաշվետվություններ ներկայացնում են միայն պետական մարմինները						
23.	«Մեգո Գոլդ» ՍՊԸ	77.110.00610	04213127	ՊՎ-184 (28.12.2012)	Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում Հր.693-Ա 13.12.2019թ. Բողոքարկվել է 2021թ. հունիսի դրությամբ համարվում է ընդերքօգտագործող	16.12.2016թ. սնանկ է ճանաչվել:
24.	«Մարջան Մայնինգ» ՍՊԸ	273.110.05412	01569837	ՊՎ-398 (07.03.2013)	Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում Հր.692-Ա 13.12.2019թ. Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում Հր.1018-Ա 29.07.2020թ.	04.02.2019թ. սնանկ է ճանաչվել
25.	«Թաթսթոուն» ՍՊԸ	264.110.06348	00079433	Պ-459 (11.02.2013)	Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում (Հր. N 729-Ա 12.05.2021թ.)	
26.	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	286.120.58034	04219371	089 (12.06.2012)	Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում Հր.N 1074-Ա 07.08.2020թ.	